ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ ՀՈԱԿ - Ի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024 թվականին կատարած աշխատանքների

Ստեփանավան 2025

Ստեփանավանի քաղաքային գրադարան ՀՈԱԿ - ը տեղեկատվական, մշակութային և կրթադաստիարակչական գործունեություն իրականացնող կազմակերպություն է:

Գրադարանները բոլոր ազգերի, այդ թվում հայերի հոգևոր կյանքի և մշակույթի զարգացման պատմության մեջ կատարել ու այսօր էլ կատարում են անփոխարինների դեր: Եվ յուրաքանչյուր տեսակի գրադարան կոչված է իրականացնելու իրեն առանձնահատուկ գործառույթներ՝ պատմամշակութային , տեղեկատվական – հաղորդակցական, սպասարկման և այլն:

Չափազանց մեծ են հայկական գրադարանների նորդարյա դերն ու նշանակությունը, որոնք գրքային հարուստ ֆոնդերի և եզակի հավաքածուների բազմազանությունը, տեղեկատվական օբյեկտների պահպանումն ու օգտագործումը օբյեկտիվորեն կապված են երկրի տնտեսության, հաղորդակցության, քաղաքականության, գիտատեխնիկական և մշակութային զարգացումների հետ: Արդի գրադարանագիտության, մատենագիտության և գրքագիտության խնդիրն է խթանել գրադարանային – տեղեկատվական գործունեության ավելի կատարելագործմանը, հասարակական տեղեկատվական պահանջների բավարարմանը, գրքի և գրադարանների ճանաչողական դերի բարձրացմանը Հայաստանում:

Ցանկացած գրադարանի գլխավոր նպատակներից մեկը՝ գործունեության արդյունավետության բարձրացումն է: Ահա հենց այս սկզբունքով է առաջնորդվում Ստեփանավանի քաղաքային գրադարան ՀՈԱԿ – ը:

Ստեփանավանի քաղաքային գրադարան ՀՈԱԿ – ում հարուստ ավանդույթներ են ձևավորվել և ավանդույթներին զուգահեռ կարողացել ենք քայլել ժամանակին համահունչ, գրադարանը զինել ժամանակակից բարձր տեխնոլոգիական սարքավորումներով : Մեր հարուստ գրադարանային ֆոնդից, գրքերի հավաքածուներից բացի, ընթերցողի տրամադրության տակ են անվճար Wi-Fi ծառայությունը:

Քաղաքային գրադարանը միաժամանակ հանդիպավայր է, գրական քննարկումների հավաքատեղի, մշակութային օջախ: Մեր կազմակերպած բազմաբնույթ միջոցառումներով ձգտում ենք հետաքրքիր դարձնել ընթերցասեր հասարակության կյանքը, մատաղ սերնդի ուշադրությունը հրավիրել գրի ու գրականության, դասական /տպագիր/ և էլեկտրոնային գրքի, գրադարան այցելելու մշակույթի վրա: Գրողների հետ հանդիպումներում մշտապես բարձրաձայնվում է հայրենասիրության ձևավորման, ազգապահպանման, ազգային գեղեցիկ ավանդույթների շարունակության և այդ հարցերում գրքի, գրողի դերի կարևորությունը: «Գրողն ակնթարթը մի ամբողջ կյանք է դարձնում» միտքը վերաձևակերպելով կարող ենք ասել, որ գրադարանում ամփոփված են բազում ակնթարթներ հայ ժողովրդի և համաշխարհային պատմության, մշակույթի գանձարաններից : Գրադարաններում պատմությունն է ապրում:

ԳՐԱԴԱՐԱՆԻ 2024Թ

ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

1.Գրադարանային հավաքածուի համալրում, պահպանում և տեղեկույթի սպասարկում

Գրադարանի գրքային հավաքածուն 2025 թվականի հունվարի դրությամբ կազմել է 97030 միավոր, որից՝

Հայերեն՝ 58854

Ռուսերեն՝ 37020

Այլ լեզուներով՝ 1156

2024 թ. քաղաքային գրադարանի հավաքածուները համալրվել են 449 միավորով, որից

Հայերեն՝ 407

Ռուսերեն՝ 25

Այլ լեզուներով՝ 17

Նվիրատվությամբ՝ 334

Համայնքային բյուջեով նախատեսված գումարով 249830 /երկու հարյուր քառասուն ինը հազար ութ հարյուր երեսուն դրամ/ և 38400 /երեսուն ութ հազար չորս հարյուր/ բաժանորդագրությամբ ձեռք է բերվել 115 միավոր գրականություն, որից

Հայերեն գիրք՝ 115 միավոր

Պարբերական հրատարակություններ՝ 2 միավոր

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Գրադարանային գործի ոլորտում փոխհամագործակցության, օգնության, կապերի ամրապնդման ու զարգացման նպատակով քաղաքային գրադարանը համագործակցում է Հայաստանի Ազգային, Ավետիք Իսահակյանի անվան, Լոռու մարզային, ինչպես նաև տարածաշրջանի բոլոր համայնքային և դպրոցական գրադարանների, հասարակական կազմակերպությունների հետ, համագործակցությունը հիմնականում կատարվում է փորձի, գրքային ֆոնդի փոխանակման, սպասարկման և համատեղ միջոցառումների կազմակերպման ու անցկացման բնագավառում:

Համագործակցում է ՄԱԿ – ի հայաստանյան գրասենյակի, մշակույթի պալատի, Ստեփան Շահումյանի անվան տուն – թանգարանի, Արթուր Ղարիբյանի անվան արվեստի դպրոցի, բոլոր հանրակրթական դպրոցների, նախակրթարանների հետ:

11.11. –Աշխատակիցների մասնակցությունը Ազգային գրադարանի կողմից կազմակերպված վարպետաց դասերին, որը տեղի ունեցավ Վանաձորի թիվ 3 ԳԿՀ - ում

26.11. – Ազգային գրադարանի կողմից կազմակերպված սեմինար – պարապմունքին աշխատակիցների մասնակցությունը,որը տեղի ունեցավ Լոռու մարզային գրադարանում

ՀԱՄԱԼՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Համալրման բաժնում հաշվետու տարում աշխատանքներ են տարվել հավաքածուի ընթացիկ համալրման ուղղությամբ:

Գրադարանային ֆոնդի համալրումն իրականացվել է գնումներով, բաժանորդագրությամբ և նվիրատվություններով:

2024 թ. քաղաքային գրադարանի հավաքածուները համալրվել են 449 միավորով, որից

Հայերեն՝ 407

Ռուսերեն՝ 25

Այլ լեզուներով՝ 17

Նվիրատվությամբ՝ 334

Համայնքային բյուջեով նախատեսված գումարով 249830 /երկու հարյուր քառասուն ինը հազար ութ հարյուր երեսուն դրամ/ և 38400 /երեսուն ութ

հազար չորս հարյուր/ բաժանորդագրությամբ ձեռք է բերվել 115 միավոր գրականություն, որից

Հայերեն գիրք՝ 115 միավոր

Պարբերական հրատարակություններ՝ 2 միավոր

Գործող հավաքածուն առ 01.01.2025թ կազմում է 97030 միավոր, որից

Հայերեն՝ 58854

Ռուսերեն՝ 37020

Այլ լեզուներով՝ 1156

Շարունակվում է գրքային հավաքածուի գործընթացը: Կատարվում է գեղարվեստական գրականությունը՝ մաշվածության և արդիականությունը կորցրած՝ մասնագիտական գրքերի ակտավորումը:

Շարունակվում է էլեկտրոնային հավաքածուի վերագրանցման աշխատանքները:

Կատարվում է էլեկտրոնային գրացուցակների մուտքագրում:

ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

Ընթերցողների միասնական քարտարանում ընթերցողների թիվը կազմում է

2827 ընթերցող, որից

2029 - Կին

798 - Տղամարդ

Տացք – 52719

Հաս. քաղ. գրականություն - 9887

Բնակ. գիտ. բժշկ. - 3008

Տեխ. գյուղ. տնտ. - 894

Մշակ. սպորտ - 3046

Բանասիր. գիտակ. գեղ. գրակ – 35884

Հաճախում – 26615

Որից 1 – 9 դասարանի աշ. թիվը - 12703

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Գրադարանի կազմակերպած բազմաբնույթ միջոցառումները հետաքրքիր են դարձնում ընթերցասեր հասարակության և մատաղ սերնդի կյանքը:

19.02. - «Գիրքը քո կյանքում» խորագրով միջոցառում բանավեճ նվիրված Հովհ. Թումանյանի ծննդյան և գիրք նվիրելու օրվան
21.02. – Մայրենի լեզվի միջազգային օր
07.03. – «Շնորհավոր Ձեր տոնը սիրելի կանայք»
13.03. – « Դարձա գրադարանի բարեկամ» հանդիպում թիվ 1 մանկապարտեզի ավագ խմբի սաների հետ
14.03. – Հանդիպում Ազգային Գրադարանի աշխատակիցների հետ
15.03. – Լեոնիդ Ենգիբարյան կինոդիտում
21.03. – Պոեզիայի միջազգային օր
22.03. - «Դարձա գրադարանի բարեկամ» հանդիպում թիվ 3 մանկապարտեզի ավագ խմբի սաների հետ
26.03. -«Դարձա գրադարանի բարեկամ» հանդիպում թիվ 4 մանկապարտեզի ավագ խմբի սաների հետ
03.04. –«Արքայադուստրը սիսեռահատիկի վրա» հեքիաթի բարձրաձայն ընթերցանություն
05.04. - «Դարձա գրադարանի բարեկամ» հանդիպում թիվ 5 մանկապարտեզի ավագ խմբի սաների հետ
05.04. – Արվեստի դպրոցի սաների «Ճպուռն ու մրջյունը» մյուզիքլ
15.04 – 22.04. – Ազգային գրադարանային շաբաթի շրջանակներում – Արշիլ Գորկու ծննդյան 120 ամյակ
16.04. –Թիվ 2 դպրոցի բարձր դասարանի աշակերտների հետ կինոդիտում նվիրված Միսաք Մանուշյանին
17.04. –«Եղիցի լույս» խորագրով միջոցառում ավագ դպրոցի սաների հետ նվիրված Պարույր Սևակի 100 - ամյակին
18.04. – Պահպանել պատմամշակութային հուշարձանները, Այցելություն Արմանիսի Սուրբ Նշան եկեղեցին և տարածքի մաքրում
22.04. – «Պարը հոգու թաքնված լեզուն է» խորագրով ցերեկույթ, «Անի» պարային ստուդիայի սաների մասնակցությամբ
22.04. – Հանդիպում «Ավրորա» հետազոտական, հոգեբանական ՀԿ – ի տնօրեն Արմինե Բարսեղյանի հետ
24.04. –Մեծ Եղեռնի զոհերի հիշատակին նվիրված «Հիշում ենք և պահանջում» խորագրով կինոդիտում
27.04. – Շիրազի 100 ամյակին նվիրված «Կարդում են ընթերցողները»
02.05. - « Դարձա գրադարանի բարեկամ» հանդիպում Լոռի Բերդ համայնքի Յաղդան գյուղի հիմնական դպրոցի 3 դաս. սաների հետ

09.05. – Հաղթանակի և խաղաղության օրվան նվիրված պսակադրություն
16.05. – Ուսանողների միջազգային օրվան նվիրված հանդիպում թիվ 1 դպրոցի շրջանավարտների հետ
24.05. - «Ընտանիքը բնության գլուխգործոցներից մեն է» խորագրով գրական – երաժշտական երեկո
01.06. – Երեխաների պաշտպանության միջազգային օր
12.06. – «Հեքիաթն է կանչում» խորագրով միջոցառում: «Դինոզավրերի սանձահարումը» հեքիաթը ընթերցեց ՀՀ Ազգային Գրադարանի տնօրենի խորհրդատու Ներսես Հայրապետյանը
18.07. – Գրադարանի հյուրն էր ՌԴ – ում բնակվող 10 – ամյա Ռոբերտ Դունիամալյանը, որի կատարմամբ հնչեց Առնո Բաբաջանյաի դաշնամուրային ստեղծագործությունները
12.08. – Երիտասարդների միջազգային օրվան նվիրված ինտելեկտուալ խաղ – մրցույթ ակտիվ ընթերցողների հետ
15.09. – «Եվրոպական ժառանգության օրեր» շրջանակում «Դարի երգիչը » խորագիրը կրող գրական – երաժշտական ցերեկույթ նվիրված Շարլ Ազնավուրի ծննդյան 100 – ամյակին
17.09. –Գրադարանի հյուրերն էին թիվ 2 դպրոցի 1 – ին դասարանի սաները
19.09. – Գրական – երաժշտական ցերեկույթ նվիրված գրող, երգահան Ռուզաննա Բոշյանին
23.09. – Թիվ 2 դպրոցի 2 – րդ դասարանի աշակերտների հետ Հովհ. Թումանյանի «Ծիտը» հեքիաթի բարձրաձայն ընթերցում
01.10. – Միջոցառում նվիրված տարեցների և երաժշտության միջազգային օրվան
07.10. – Գրադարանավարի օրվա առթիվ հանդիպում ՀՀ Լոռու մարզպետի հետ
24.10. – Գրական – երաժշտական երեկո նվիրված Ստեփանավանի համայնքապետի խորհրդական Գագիկ Շիրմազանյանին
04.11. – Սոս Սարգսյանի ծննդյան 95 ամյակին նվիրված «Ոտնամաններս» գրքի բարձրաձայն ընթերցում և քննարկում
17.11. – Ցերեկույթ նվիրված ուսանողների միջազգային օրվան
07.12. - «Ամենաաղետալի իրադարձությունը Հայաստանում» փաստավավերագրական ֆիլմի դիտում նվիրված երկրաշարժի զոհերի հիշատակի օրվան
19.12. – Ամանորյա տոներին ընդառաջ Տաթևիկ Պետրոսյանի «Սուրբ ծննդյան տնակը» հեքիաթի բարձրաձայն ընթերցում

Քաղաքային գրադարան ՀՈԱԿ – ի տնօրեն Ս. Դունիամալյան